ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

☐ Ընթացիկ հաշվետվություն

☐ Եռամսյակային ֆինանսական հաշվետվություն

☑ Տարեկան հաշվետվություն

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական Գործարան ԲԲԸ

թողարկողի ֆիրմային անվանումը (անունը,ազգանունը)

Բաց բաժնետիրական ընկերություն

կազմակերպական - իրավական ձևը

ք.Երևան 0023, Արշակունյաց,12 հեռ. (010)52-53-21, ֆաքս (010)52-57-13 www.yerjewel.com

---

գտնվելու վայրը,հասցեն, կապի միջոցները(հեռախոս,ֆաքս, էլ-փոստ և այլն)

N 02 30.04.2026թ.

հաշվետվության համարն ու ամսաթիվը

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ **սովորական**

արժեթղթերի քանակը՝ **1.095.340 հատ**

արժեթղթերի անվանական արժեքը(արժույթը)՝ **1000**

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք,որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ,որոնք կարող են խեղաթյուրել հաշվետվության ամբողջականությունը»:

ստորագրող անձինք՝

Ազատուհի Մակարյան	գլխ.հաշվապահ		30.04.2026թ..
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում եմ (ստորագրությունները վավերացվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)՝

Տիգրան Երոյան	գլխավոր տնօրեն		30.04.2026թ..
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Կ.Տ.

ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ ԲԲԸ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. . ՏԱՐԻ

Հասցե	*ք. Երևան 0023, Արշակունյաց փ. 12*
Հեռախոս	*(010) 58-66-18, (010) 52-53-21*
Ֆաքս	*(010) 52-57-13*
Էլ. փոստ	*Info@yerjewel.com*
Ինտերնետ կայք	*www.yerjewel.com*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Է. Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ կառավարման մարմինների զեկույց -էջ 4

Ընկերության ֆինանսական վերլուծություն –էջ 8

Ֆինանսական կայունության վերլուծություն -էջ 8

Հաշվեկշռի իրացվելիության վերլուծություն -էջ 10

Շրջանառու միջոցների շրջանառելիության վերլուծություն - էջ 11

Ընկերության կառավարման մարմինների վերաբերյալ տեղեկություններ - էջ 12

Կառավարման մարմինների հայտարարությունը - էջ 12

Կառավարման մարմինների զեկույց

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական Գործարան ԲԲԸ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ոսկերչական արտադրության առաջատար կազմակերպություններից մեկը: Հիմնադրվելով Երևանի Ոսկերչական Գործարանի բազայի վրա և շարունակելով առավել քան 70 ամյա ավանդույթները Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական Գործարան ԲԲԸ հաջողությամբ շարունակում է իր գործունեությունը՝ հաջողությամբ համադրելով կուտակած բազմամյա փորձը և ժամանակի նորարարական լուծումները:

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական Գործարան ԲԲԸ նմանատիպ այլ կազմակերպություններից տարբերվում է արտադրության կազմակերպման սեփական մոտեցումով: Ընկերության ղեկավարությունն արտադրության կազմակերպման առաջնային պայման է համարում քայլել համաշխարհային տեխնոլոգիաներին համընթաց, ուստի մեծ ռեսուրսներ են հատկացվում և չափազանց խրախուսվում են նորարարական մոտեցումների և արդի լուծումների ներդրման ոլորտում: Ընկերությունը հանրապետության միակ ոսկերչական կազմակերպությունն է , որտեղ աշխատում է բարձր որակավորում ունեցող երիտասարդ ինժեներների մեծ բանակ: Ի շնորհիվ այս ամենի գործարանը տիրապետում է համաշխարհային ոսկերչական շուկայում կիրառվող բոլոր նորարարական լուծումներին, ունի արտադրության ավտոմատացման բարձր աստիճան, որակի վերահսկման համակարգ:

Շնորհիվ մասնագիտական բարձր որակավորում ունեցող ղեկավար կազմի, ընկերությունը բավականաչափ հեշտությամբ կարողանում է արձագանքել շուկայի ազդակներին՝ սեփական արտադրությունը ճկունորեն ուղղելով նոր ապրանքատեսակների արտադրությանը:

2008 թվականից սկսած համաշխարհային ճգնաժամին դիմագրավելու համար գործարանն ավելացրեց նոր արտադրական ուղղություններ՝ ոչ թանկարժեք մետաղներից իրերի արտադրության գծով: Այս պահին գործարանն արտադրում է ՀՀ շքանշանների , կրծքանշանների և հուշամեդալների լայն տեսականի , զինվորական հագուստի ալյումինե աքսեսուարներ, հուշանվերներ , փականի դետալներ և այլն: Հայաստանի Հանրապետությունում լինելով առաջատարն ապրանքատեսականու որակով և հաջողությամբ մասնակցելով գնումների գործընթացին ընկերությունն հանդիսանում է այնպիսի կառույցների մատակարար ինչպիսիք են ՀՀ նախագահի աշխատակազմը, ՀՀ կառավարությունը, ՀՀ ազգային ժողովը, ՀՀ

սահմանադրական դատարանը, ՀՀ ոստիկանությունը, ՀՀ Պաշտպանության նախարարությունը, արտաքին գործերի, ներքին գործերի, սպորտի, կրթության և գիտության, առողջապահության, արտակարգ իրավիճակների նախարարությունները, ՀՀ պատմության թանգարանը, ՀՀ պատկերասրահը, ՀՀ ֆիլարմոնիան և այլն: Գործարանն արտադրել է բարձրորակ հոբելյանական մեդալներ, հուշամեդալներ և հուշանվերներ այնպիսի կազմակերպությունների համար ինչպիսիք են <Արարատ> կոնյակի գործարանը, <Նոյ> կոնյակի գինու օղու կոմբինատը, Գրանդ Քենդի ՍՊԸ, Արդշինբանկը, <Ակբա> բանկը և այլ կազմակերպություններ:

Այս պահին գործարանն ունի ոսկերչական զարդերի մոտ 15 000 ապրանքատեսականի և ոչ թանկարժեք մետաղներից արտադրվող իրերի մոտ 1500 տեսականի:

2025թվականի նպատակն է՝

- նվաճել արևելյան շուկաներ, մուտք գործել իրանական շուկա, ընդլայնվել և կայունանալ միջին ասիական երկրներում, ԱՄԷ-ում, Եվրոպայում, ԱՄՆ-ում, վրացական:
- օգտվելով մաքսային միությանն Հայաստանի անդամկցությամբ ստացված առավելություններից և ծավալել լուրջ ապրանքաշրջանառություն Մաքսային Միության երկրների (մասնավորապես ՌԴ) հետ:
- ստեղծել նոր, առավել պահանջված ապրանքատեսականի ՝ առանձնացնելով ամեն շուկայի համար ստեղծված ապրանքատեսականին ըստ մշակութային և շուկայական առանձնահատկությունների
- ներդնել ավտոմատացված հոսքագծեր , գերարագ տեխնոլոգիաներ, որոնք կտրուկ կբարձրացնեն արտադրողականությունը, կիջեցնեն իրերի ինքնարժեքը և կդարձնեն ընկերության տեսականին առավել մրցունակ:

Մեր ընկերությունը ունի անհրաժեշտ ռեսուրսներ էլ ավելի արդյունավետ տնտեսական գործունեություն իրականացնելու համար: Սակայն օբյեկտիվ պատճառներով, որոնք բնորոշ են հանրապետության բոլոր ներքին արտադրողներին չի կարողանում հասնել առավելագույն արդյունքի:

Արտադրության և տնտեսության զարգացմանն խոչընդոտող հանգամանքներից նշեմ միայն երկուսը՝

1)Ներկայիս մրցույթների կազմակերպման գործող կարգը չի նպաստում տեղական արտադրողների տնտեսական զարգացմանը, քանի որ հաճախ առավելությունը տրվում է այն

կազմակերպություններին , որոնք մի փոքր պակաս գին առաջարկելով և շահելով մրցույթում , այնուհետև ոչ թե իրենք են իրագործում ապրանքի արտադրումը, այլ երկրից դուրս բերելով մեծ քանակի արտարժույթ, էժան գներով արտերկրից ձեռք են բերում ցածր որակի ապրանք և վաճառում գնորդին:

Նման պայմաններում , ներքին արտադրողը (ավելի մեծ իմաստով նաև պետությունը) հայտնվում է ոչ նպաստավոր իրավիճակում: Ներքին արտադրողը վճարում է կոլեկտիվի աշխատավարձը, կատարում է կոմունալ և այլ տարատեսակ վճարումներ և վերջապես վճարում է սահմանված հարկերը: Արդյունքում ներքին արտադրողի ապրանքի գինը լինում է աննշան , հիմնականում մինչև 10% տարբերությամբ:

Կարծում եմ , որ մրցույթների ժամանակ պետք է հաշվի առնվի պետության իրական շահը և առաջնահերթություն տրվի ներքին արտադրողներին, որոնք հանդիսանում են պետության տնտեսության զարգացման հենասյուները:

2)Ներքին արտադրողների համար, բավականին լուրջ բարդություններ են առաջացնում նաև ապրանքի ինքնարժեքի բարձրացմանը նպաստող ներկրվող հումքի համար մաքսատներում վճարվող ոչ օբյեկտիվ և ուռճացված գումարների հաշվարկումը:

ՀՀ արդյունաբերությունը կողմնորոշված է նյութերի և տեխնոլոգիաների պահանջարկի բավարարման հարցում հիմնականում ներկրման միջոցին , որը ստեղծում է խիստ բարձր ինքնարժեք:

Մեր կարծիքով վերը նշված հանգամանքների առկայությունը լրջորեն խոչընդոտում են ներքին արտադրողների գործունեությանը, բարձրացնում առանց այդ էլ բարձր ինքնարժեքը և մասնավորապես խոչնդոտում են պետության տնտեսության զարգացման գործընթացին:

Ընկերության գործունեության գերակա ուղղությունները

Ընկերության գործունեության գերակա ուղղություններն են ոսկերչական իրերի, պերճանքի առարկաների, թանկարժեք զարդեղենի, ժամացույցների, հանդերձանքի պարագաների արտադրությունը և վաճառքը:

Թանկարժեք մետաղների և քարերի առքը և վաճառքը:

Ոսկերչական արտադրության համար անհրաժեշտ օժանդակ նյութերի, գործիքների, տեխնոլոգիական հանդերձանքի և սարքավորումների արտադրությունը և վաճառքը:

Արտադրությունից առաջացած թանքաժեք մետաղների թափոնների վերամշակումը, թանկարժեք մետաղներից դետալների և կիսաֆաբրիկատների արտադրությունը և վաճառքը, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վերանորոգումը:

Ընկերությունը պատվերները կարող է կատարել ինչպես իր, այնպես էլ պատվիրատուի հումքով:

Ընկերությունը հնարավորություն ունի տրամադրել վարձակալության արտադրական և օֆիսային տարածքներ:

Գնումների գործունեություն

Գնումների գործունեությունն Ընկերության կանոնակարգվում է գնումների անցկացման կարգի մասին կանոնակարգով, որը հաստատված է Ընկերության տնօրենների խորհրդի 19.12.2001 թ. որոշմամբ (արձանագրություն թիվ 2): Վերը նշված կանոնակարգը կարգավորում է ցանկացած գնման ընթացակարգերը ապրանքների, աշխատանքների ,ծառայությունների (այսուհետ՝ արտադրանք) 300,000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ ավելի արժողությամբ ընկերության միջոցների հաշվին:

Կանոնակարգով նախատեսված են գնումների հետևյալ եղանակները՝

1) մրցույթ
2) առաջարկների հարցում,
3) գնային հարցում,
4) մրցակցային բանակցություններ,
5) գնում միակ աղբյուրից,
6) վաճառողների կողմից կազմակերպված արտադրանքի գնում ընթացակարգերին մասնակցելու միջոցով:

Գլխավոր տնօրեն՝

Տիգրան Երոյան

Ընկերության ֆինանսական վերլուծություն

2025թ. Տարի

Ընկերության ընդհանուր ակտիվները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմել է 4,780,143.0 հազ. դրամ այդ թվում ոչ ընթացիկ ակտիվները 2,468,966.0 հազ. դրամ , ընթացիկ ակտիվները՝ 2,279,047.0, որոնք կազմում են ընդհանուր ակտիվների համապատասխանաբար 52.00 % և 48.00 %-ը:

2025թ տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում շահույթը կազմել 114,911.0 հազ. դրամ, շահութահարկի գծով ծախսը նվազեցնելուց հետո: Հաշվապահական հաշվառման կազմակերպման համար պատասխանատու է գլխավոր տնօրենը:

Ընկերությունում հաշվապահական հաշվառումն իրականացվում է 1C – Ձեռնարկություն հաշվապահական ծրագրով:

Ֆինանսական կայունության վերլուծություն

1. **Ֆինանսական անկախության գործակիցը** ցույց է տալիս, թե ընկերության ընդհանուր միջոցների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի հաշվին: Այլ կերպ, այն սեփական կապիտալի տեսակարար կշիռն է կազմակերպության ընդհանուր կապիտալում:

$$Գ1 = \frac{\text{Սեփական կապիտալ}}{\text{Հաշվեկշռի հանրագումար}} = \frac{4,270,542}{4,780,013} = 0,90$$

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 0.5:

2. Պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցության գործակիցը իր իմաստով մոտ է նախորդ գործակցին և ցույց է տալիս, թե սեփական կապիտալի միավորի հաշվով որքան պարտավորություններ ունի կազմակերպությունը:

$$Գ2 = \frac{\text{Պարտավորություններ}}{\text{Սեփական կապիտալ}} = \frac{473,471}{4,270,542} = 0,11$$

Այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը կազմում է 1:

3. **Ինքնավարության գործակիցը** ցույց է տալիս, թե կազմակերպության միջոցների որ մասն է ձևավորվել երկարաժամկետ ներգրավված աղբյուրների հաշվին:

$$Գ3 = \frac{\text{Սեփական կապիտալ + երկարաժամկետ պարտավորություն}}{\text{Հաշվեկշռի հանրագումար}} = \frac{4,478,889}{4,748,013} = 0.94$$

Այս գործակիցը ավելի մեղմ է, քան ֆինանսական անկախության գործակիցը, դրա իջեցումը դիտվում է բացասական երևույթ, քանի որ իր միջոցների ֆինանսավորման համար արդեն սկսել է ներգրավել միջոցներ կարճաժամկետ հիմունքներով:

4. **Գործող կապիտալ**: Այն ցույց է տալիս, թե ընթացիկ ակտիվների, որ մասն է ապահովված սեփական կապիտալով և երկարաժամկետ պարտավորություններով կամ երկարաժամկետ հիմունքներով ներգրավված միջոցների որ մասն է ուղղված ընթացիկ ակտիվների ֆինանսավորմանը:

Գ4 = ընթացիկ ակտիվներ – կարճաժամկետ պարտավորություններ 2,279,047- 269,124 =2,009,923

5. Ընթացիկ ակտիվների՝ գործող կապիտալով ապահովվածության գործակից: Այն ցույց է տալիս, թե ընկերության ընթացիկ ակտիվների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի և երկարաժամկետ պարտավորությունների հաշվին:

$$Գ5 = \frac{\text{Գործող կապիտալ}}{\text{Ընթացիկ ակտիվներ}} = \frac{2,009,923}{2, 279,047} = 0.88$$

Այս ցուցանիշի նորմատիվային փոքրագույն արժեքը կազմում է 0.1:

6. **Պաշարների գործող կապիտալով ապահովվածության գործակից:** Այն ցույց է տալիս, թե ընկերության ընթացիկ ապրանքանյութական պաշարների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի և երկարաժամկետ պարտավորությունների հաշվին:

$$Գ6 = \frac{\text{Գործող կապիտալ}}{\text{Պաշարներ}} = \frac{2,009,923}{1,942,648} = 1.03$$

7. **Սեփական կապիտալի** մանևրայնության գործակից: Այն ցույց է տալիս, թե ընկերության

սեփական կապիտալի հաշվին ձևավորված միջոցների որ մասն է գտնվում շարժունակ (մոբիլ) վիճակում:

$$Գ7 = \frac{\text{Գործող կապիտալ}}{\text{Սեփական կապիտալ}} = \frac{2,009,923}{4,270,542} = 0.47$$

Հաշվեկշռի իրացվելիության վերլուծությունը

Իրացվելիությունը բնութագրող ցուցանիշներն են

1. **Ընթացիկ իրացվելիության գործակից:** Այն ցույց է տալիս ընկերության կարճաժամկետ պարտավորությունների ընթացիկ ակտիվներով ապահովվածության աստիճանը և որոշվում է ընթացիկ ակտիվների և կարճաժամկետ պարտավորությունների հարաբերությամբ:

$$Գ8 = \frac{\text{Ընթացիկ ակտիվներ}}{\text{Կարճաժամկետ պարտավորություններ}} = \frac{2,279,047}{269,124} = 8.47$$

Այս ցուցանիշի սահմանային նվազագույն արժեքը 1 է:

2. Արագ իրացվելիության գործակից: Այն ցույց է տալիս կարճաժամկետ պարտավորությունների առավել իրացվելի ակտիվներով ապահովվածության աստիճանը և որոշվում է առավել իրացվելի ակտիվների (դրամական միջոցներ, կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ, դեբիտորական պարտքեր) և կարճաժամկետ պարտավորությունների հարաբերությամբ:

$$Գ9 = \frac{\text{Արագ իրացվելի ընթացիկ ակտիվներ}}{\text{Կարճաժամկետ պարտավորություններ}} = \frac{271,597}{269,124} = 1,01$$

Այս ցուցանիշի սահմանային նվազագույն արժեքը 1 է:

ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. **Ակտիվների շրջանառելիության գործակից:** Այս ցուցանիշը բնութագրում է համախառն ակտիվների շրջանառության արագությունը:

$$Գ10 = \frac{\text{Արտադրանքի իրացումից հասույթ}}{\text{Ակտիվների միջին մեծություն}} = \frac{3,031,673}{4,657,705} = 0.651$$

2. **Ընթացիկ ակտիվների շրջանառելիության գործակից:** Այս ցուցանիշը բնութագրում է ընթացիկ ակտիվների շրջանառության արագությունը:

$$Գ11 = \frac{\text{Արտադրանքի իրացումից հասույթ}}{\text{Ընթացիկ ակտիվների միջին մեծություն}} = \frac{3,031,673}{2,200,043} = 1.378$$

3. **Պատրաստի արտադրանքի շրջանառելիության գործակից:** Այս ցուցանիշը բնութագրում է պատրաստի արտադրանքի շրջանառության արագությունը:

$$Գ12 = \frac{\text{Իրացված արտադրանքի արտադրական արժեք}}{\text{Պատրաստի արտադրանքի միջին մեծություն}} = \frac{2,631,481}{1,091,051} = 2.41$$

Գլխավոր հաշվապահ- Ա. Մակարյան

Ընկերության կառավարման մարմինների վերաբերյալ տեղեկություններ

Ընկերության կանոնադրությամբ սահմանված ընկերության կառավարման մարմիններն են ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը, ընկերության տնօրենների խորհուրդը և ընկերության գործադիր մարմինը՝ գլխավոր տնօրենը: Ընկերության կառավարմանը մասնակցող անձինք են՝ Տիգրան Երոյանը (գլխավոր տնօրեն), Ազատուհի Մակարյանը (գլխավոր հաշվապահ):

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մենք՝ Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական Գործարան ԲԲԸ գլխավոր տնօրեն Տիգրան Երոյանը և գլխավոր հաշվապահ Ազատուհի Մակարյանը, սույնով հայտարարում ենք այն մասին, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լավագույն ձևով արտացոլում են ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը:

Կառավարման մարմինների զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները, զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է ընկերությունը:

Գլխավոր տնօրեն՝

Տիգրան Երոյան

Գլխավոր հաշվապահ՝

Ազատուհի Մակարյան